ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-21-Ը ՄԱՐՈԿԿՈՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՔԱՂԱՔ ՄԱՐԱՔԵՇ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը՝

Քրիստինե Ղալեչյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Մարոկկոյի Թագավորություն (Քաղաք Մարաքեշ), 2025թ. Փետրվարի 17-21-ը

4. Հրավիրող կողմը.

Մարոկկոյի Թագավորություն, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Մարոկկոյի Թագավորության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) աջակցությամբ 2025 թվականի փետրվարի 18-20-ը Մարոկկոյի Թագավորության Մարաքեշ քաղաքում կազմակերպված՝ «Ճանապարհային անվտանգության չորրորդ գլոբալ նախարարական համաժողովին»:

6. Քննարկված թեմաները.

Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով ստանձնած ի թիվս այլ պարտականությունների՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է նաև հասնել ՄԱԿ-ի Ճանապարհային անվտանգության գլոբալ պլանի հինգ հենասյուներով նախատեսված թիրախների իրականացմանը և «Զրո Տեսլականին», ինչպես նաև կիրառման մեջ դնել ճանապարհային անվտանգության հետ առնչվող CEPA համաձայնագրով նախատեսված ԵՄ հրահանգների պահանջները: Հայաստանում ճանապարհային անվտանգության բարելավմանն ուղղված բացերը, որոնք խոչընդոտ են հանդիսանում ՄԱԿ-ի Ճանապարհային անվտանգության գլոբալ պլանի իրականացմանը, հնարավոր է հաղթահարել Հայաստանում բազմաթիվ բարեփոխումների իրականացմամբ, ինչպես նաև ճանապարհային անվտանգության կառավարման համակարգի և ժամանակակից ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծմամբ: Հաշվի առնելով, որ այցի շրջանակներում Համաժողովի ծրագրով նախատեսված օրակարգային հարցերով քննարկվել են ճանապարհային անվտանգության այն հիմնական հիմնախնդիրները (կլիմայի փոփոխության, կայուն տրանսպորտային համակարգի, ճանապարհային անվտանգության կայուն ֆինանսավորում, ճանապարհային անվտանգության

մարտահրավերները և այլն), որոնք ծառացել են աշխարհի մի շարք երկների, այդ թվում Հայաստանի Հանրապետության առջև, ուստի Համաժողովի օրակարգում նախատեսված թվով 6 լիագումար նիստերի, 4 պանելային և նախարարական կլոր սեղանի ընթացքում քննարկվող հարցերը հնարավորություն ընձեռեցին ճանապարհային անվտանգության բնագավառում միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև լավագույն ձեռքբերումներ ունեցող երկրների հետ ստեղծել փոխշահավետ համագործակցության հարթակ՝ Հայաստանում ճանապարհային անվտանգության համակարգի բարելավման համար: Նշված շրջանակներում իրականացին նաև տարբեր երկների նախարարների և ղեկավարների մակարդակով քննարկումներ՝ ճանապարհային անվտանգության բարելավման համար առկա խնդիրները քննարկելու և դրանց արդյունավետ լուծումներ տալու նպատակով նոր պլաններ կազմելու և դրանք իրականացնելու համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում Արևելյան գործընկերության (ԱԳ) «Ճանապարհային անվտանգության տարածաշրջանային դիտակետ» (ՃԱՏԴ) կենտրոնի և Անվտանգ և կայուն տրանսպորտի արևելյան դաշինքի (EASST) պաշտոնյաների հետ քննարկվել է ճանապարհային անվտանգության ոլորտում Հայաստանին աջակցության շրջանակը և հնարավորությունները:

Համաժողովի ընթացքում հանդես է եկել ելույթով ներկայացնելով ճանապարհային անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության և միջազգային հանրության առջև ծառացած խնդիրները: Անդրադարձել է Հայաստանի Հանրապետությունում ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշներին, մահերի թիվին, վերջինիս սոցիալ-տնտեսական ազդեցությանը երկրի ՀՆԱ-ի վրա: Ելույթի ընթացքում ներկայացրել է նաև Հայաստանի Հանրապետության կողմից մշակվող 2025-2040 թվականների ճանապարհային անվտանգության համապարփակ ազգային ռազմավարության հայեցակարգը, որը համահունչ է միջազգային լավագույն փորձին և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, մասնավորապես՝ մինչև 2030 թվականը գլոբալ ճանապարհատրանսպորտային մահերի կրկնակի կրճատման թիրախին:

Ելույթի շրջանակներում խոսել է ճանապարհային անվտանգության մակարդակի բարելավման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականցվող օրենսդրական բարեփոխումների և ներդրվող նոր իրավակարգավորումների մասին, ընդգծելով, որ մինչև 2027 թվականը նախատեսվում է Հանրապետության բոլոր մայրուղիներում իրականացնել անվտանգության աուդիտ, ինչը հնարավորություն կտա վեր հանել ճանապարհների խնդրահարույց և վթարավտանգ հատվածները:

Նշել է, որ 2023 թվականին Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ հաջողությամբ վերացրել են 47 սև կետերի վեր հանման ուղղությամբ աշխատանքները՝ բարելավելով անվտանգության տարրերը ընդհանուր 38,4 կմ երկարությամբ ճանապարհային հատվածներում: Ճանապարհային անվտանգությունը բարձրացնելու նպատակով երկրում լայնորեն օգտագործում են տեխնոլոգիայի ուժը: Նոր ներդրված

«Ճանապարհների տեղեկատու» հավելվածի միջոցով իրական ժամանակում տեղեկատվություն է տրամադրվում Հայաստանի միջպետական և հանրապետական ճանապարհների, ինչպես նաև հիվանդանոցների և ոստիկանության բաժանմունքների գտնվելու վայրի մասին, որը ճանապարհներից օգտվողներին հնարավորություն է տալիս ստանալ կարևոր տեղեկություն և ավելի անվտանգ ճանապարհորդական որոշումներ կայացնել:

Ելույթի ընթացքում ներկայացվել են միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքները, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Ասիական զարգացման բանկի, ՄԱԶԾ-ի, Ճանապարհային անվտանգության միջազգային հիմնադրամի և այլ միջազգային գործընկերների հետ իրականացվող ծրագրային արդյունքները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում ընդունվել է հռչակագիր, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

28.02.2025թ.